

ՈՒՏԴ 551.444:556.18

**Հ. Վ. Թորմաջյան , Ա. Խ. Մարկոսյան, Ա. Վ. Միմոնյան,
Հ. Ֆ. Մելքոնյան, Վ. Բ. Մկրտչյան**

**Հայաստանի ջրամատակարարման համակարգի տնտեսական
անվտանգության հայեցակարգի մասին**

(Ներկայացված է ակադեմիկոս Ֆ. Տ. Սարգսյանի կողմից 27/XII 2000)

Ջրամատակարարման համակարգի սահմանումը տրված է ՀՀ ջրային օրենսգրքի առաջին հոդվածի 11-րդ մասում. «Ջրամատակարարման համակարգ՝ ինժեներային կառուցվածքների համալիր, որի միջոցով ջուրը վերցվում է, մշակվում, տեղափոխվում և տրվում սպառողներին»:

Տնտեսավարման ազատական համակարգում ջրամատակարարման համակարգի առանձին հանգույցներ (տեղամասեր) սեփականության իրավունքով կարող են պատկանել տարբեր իրավաբանական կամ ֆիզիկական անձանց: Այս պայմաններում ջրային ֆոնդի անխափան աշխատանքն ապահովելու համար կարևորվում է մշակել համակարգի տնտեսական անվտանգության նոր հայեցակարգ և իրականացնել դրանից բխող միջոցառումների ծրագիր:

Համաձայն [1]-ի կոմունալ տնտեսության ոլորտում տնտեսական անվտանգության մակարդակը գնահատելու համար առաջարկվում է կիրառել երկու խմբերի բաժանված ցուցանիշների համակարգ: Առաջին խումբը ներհամակարգայինն է, որն իր մեջ ընդգրկում է ջրարդյունահանման գործընթացը, ջրերի որակը, տնտեսական իրավիճակը (այդ թվում՝ ջրի կորուստները, էլեկտրաէներգիայի օգտագործումը, համակարգի կրեդիտորական և դեբիտորական պարտքերի հաշվեկշիռը և այլն):

Երկրորդ խումբը արտահամակարգայինն է, որն իր մեջ ընդգրկում է ջրօգտագործողների վճարունակությունը, համակարգի սննկացման հնարավորությունը, ջրային օբյեկտների աղտոտվածության աճը, ջրի դեֆիցիտը, ներդրումային, իրավական և հարկային դաշտերի վիճակը:

Այսպիսի բաժանում կարելի է իրականացնել նաև ամբողջ ջրամատակարարման համակարգի համար: Ներկայացված ցուցանիշների համակարգում քննարկենք ջրատրնտեսական համակարգերի տնտեսական անվտանգության վրա ազդող գործոնները:

Ջրի գնագոյացման սկզբունքները.

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ ջրի սակավության աճի բացահայտման տարբեր ձևերի մեջ առավել հաճախ հանդիպում են ջրի բաշխման պատճառով առաջացող սոցիալական կոնֆլիկտները: Ջրի սակավության հիմնահարցին լուծում տալու համար նախ և առաջ անհրաժեշտ է քննել ջրի կորուստները և բարձրացնել ջրի օգտագործման

արդյունավետությունը: Այդ պատճառով, եթե մինչև արդյունավետության բարձրացման քաղաքական ուղղություններից կարևորագույնը մենք համարում ենք այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կհանգեցնեն ջրային ռեսուրսների կառավարման և տնօրինման կենտրոնացմանը: Կենտրոնացված միավորի իրավասությունները մեր կողմից շարադրված են [2]-ում: 1970-ական թվականները աշխարհը գնում էր ջրային ռեսուրսների յուրացման խոշոր ծրագրերի իրականացման ճանապարհով, ապա XXI դարում ռազմավարական ուղղությունն այս ոլորտում դառնում է ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարումը: Տնտեսագիտությունից հայտնի է, որ ռեսուրսների օգտագործման առավելագույն արդյունավետությունը տեղի է ունենում, երբ ռեսուրսի եկամտի արժեքը հավասար է լինում նրա սակավության արժեքին: Գործնականում այս պայմանները կարող են հանդես գալ ջրային ռեսուրսների բաշխման կենտրոնացված կամ ապակենտրոնացված ինստիտուտների միջոցով: Կենտրոնացված ինստիտուտի դեպքում ռեսուրսի սեփականատերը (հիմնականում դա պետությունն է) հաճախ, այն սպառողների համար մատչելի դարձնելու նպատակով, արհեստականորեն իջեցնում է եկամտի արժեքը, հավասարեցնելով այն սակավության նվազեցված արժեքին, որը մենք կանվանենք կեղծ սակավության արժեք: Ապակենտրոնացված ինստիտուտում ջրօգտագործողները ջուրը գնում են շուկայում, որի արդյունքում առաջանում է հարաբերական սակավության հասկացողությունը, որը հավասար է ջրի շուկայական գնին: Ջրի սահմանային արժեքը բոլոր ջրօգտագործողների համար այդ դեպքում դառնում է նույնը:

Ջրի աճող սակավության պայմաններում սակավության իրական արժեքը բարձր է և՛ ջրի հարաբերական սակավության, և՛ կեղծ սակավության արժեքներից, այսինքն՝ ջրի գնահատումը չի կիրառվում, որպես նրա արդյունավետ օգտագործման մեխանիզմ: Այս ոլորտում անհրաժեշտ է ինստիտուցիոնալ և քաղաքական բարեփոխումների իրականացում, որի դեպքում ջրի գնագոյացումը կդառնա արդյունավետ գործոն, որով և կբաշխվեն ջրային ռեսուրսները: Ի տարբերություն այլ դեպքերի, ջրային ռեսուրսների ոլորտում ազատ շուկաները (կատարյալ մրցակցությունը), որտեղ անտեսվում են ոչ տնտեսական արժեքները, կարող են վերածվել աճող սոցիալական կոնֆլիկտների աղբյուրի: Այս եզրակացության են հանգել Ինգրամը, Մամբը և Բրաունը՝ «Ջրի շուկաները ավելի չեն, քան ջրի հսկման և վերաբաշխման ծրագրերը ..., և առավել ուժեղները կարող են գնել սակավ ջրի իրավունքները»[3], որոնց կարծիքով ջրի հատկացումը պետք է լինի փոխզիջում «արդյունավետ օգտագործման» և «արդարության» միջև:

Համաձայն [2]-ի ջրօգտագործողների չվճարումները ունեն իրավական, տնտեսական, սոցիալական և քաղաքական հիմքեր: Չվճարումների պատճառներից մեկը իրավական դաշտի անկատարությունն է, որի արդյունքում չվճարումների համար ոչ միայն հնարավոր չէ կիրառել պատասխանատվության հստակ մեխանիզմներ, այլև տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման ասպարեզում, իրավասությունների տարանջատման խճճված պայմաններում առաջանում են շահերի բախումներ և քաղաքական շահարկումների հնարավորություն: Վերջինիս վտանգավոր դրսևորումներն առավելապես նկատվում են քաղաքական ընտրարշավների ընթացքում: Ջրօգտագործման արդյունավետության բարձրացման քաղաքական ուղղություններից կարևորագույնը մենք համարում ենք այն օրենսդրական փոփոխությունները, որոնք կհանգեցնեն ջրային

ռեսուրսների կառավարման և տնօրինման կենտրոնացմանը: Կենտրոնացված միավորի իրավասությունները մեր կողմից շարադրված են [2]-ում:

Հարկ է նշել, որ ջրամատակարարման գործընթացի միայն սպասարկման ծախսերը զգալիորեն բարձր են հանրապետությունում այսօր կիրառվող սակագներից կազմավորվող դրամամուտքի հաշվարկային չափից: Միևնույն ժամանակ Համաշխարհային բանկի կողմից ներկայացվող պահանջները՝ ջրօգտագործողների կողմից վճարումների լիովին ապահովելու ուղղությամբ, մեր կարծիքով իրատեսական չեն: Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1930-ական թվականներին ընդունված նույն տարբերակը, այն է՝ «ջրօգտագործողները պետք է վճարեն», ձախողվեց: Ֆերմերները մշտապես ուշացնում էին վճարումները, ստիպելով Կոնգրեսին ներելու կամ հետաձգելու առաջացած պարտքերը [3]: Ստեղծված իրավիճակում 1937 թվականին ԱՄՆ-ում ստեղծվում է լայն լիազորություններով հատուկ հանձնաժողով, որը ստանում է մանդատ՝ «հետազոտել տարբեր յուրացման նախագծերի ֆինանսական, տնտեսական և այլ պայմանները, որպեսզի պարզվի յուրաքանչյուրի ունակությունը՝ ապահովելու վճարումները ջրի ծախսերի համար, բայց առանց անհարկի ծանրության ջրօգտագործողների համար»: Հատուկ հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում 1939թ. ընդունվում է համապատասխան որոշում, ըստ որի ջրօգտագործողները բաժանվում են երկու խմբերի՝ մասնավոր և հասարակական: Մասնավոր ջրօգտագործողների մեջ ներառվել են իռիգատորները, հիդրոէլեկտրակայանները, մունիցիպալ-արդյունաբերական ջրօգտագործողները: Հասարակական ջրօգտագործողների տիրույթին են պատկանում հանգստավայրերը, ձկնաբուծությունը, բնապահպանությունը: Ընդ որում հասարակական ջրօգտագործողներն ազատվում են ջրի համար վճարումից: Ոչ գյուղատնտեսական ջրօգտագործողները վճարում են իրենց բաժնի լրիվ գումարը տոկոսների հետ միասին, իսկ իռիգացիոն ֆերմերները վճարում են իրենց բաժնի այն մասը, որը հիմնվում է նրանց վճարունակության վրա, իսկ տոկոսները զիջվում են: Միևնույն ժամանակ ԱՄՆ-ում, խճճված սեփականության իրավունքի խնդիրների մեջ, պետական կառավարման լիազոր մարմինը չունի օրենսդրական մանդատ, որը թույլ կտար նրան գանձելու վճարները ջրօգտագործողներից ոչ միայն կապիտալ ծախսերի և սպասարկման ծախսերի համար: Նրանք չեն կարող փոխել նահանգային օրենքով նախատեսված ջրի բաշխումը և ոչ էլ ջրի գինը վերցնել ավելի, քան անհրաժեշտ է կապիտալ և սպասարկման ծախսերը փակելու համար[3]: Այստեղից հետևում է, որ ջրի պայմանագրային գները ֆիքսված գներ են և էապես չեն փոփոխվում ջրօգտագործման հետ կապված տարբեր գործոններից: Ասվածի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում սկսած 1994 թվականից ջրերի գնագոյացման և դրամամուտքի ապահովման գործընթացների առումով իրականացվել է անհեռանկարային քաղաքականություն:

Ջրի գնագոյացման սկզբունքը համաձայն [2]-ի պետք է բաղկացած լինի երեք բաղադրամասերից՝ ռեսուրսավճարից, շահագործման ծախսերի փոխհատուցման վճարից և ոլորտի զարգացման վճարից: Ելնելով հանրապետության զարգացման ծրագրի տվյալ ժամանակահատվածի առանձնահատկություններից, ժամանակի որոշ պարբերականությամբ պետք է որոշվեն ջրի հաշվարկային սակագները խմելու, ոռոգման, հանքային ջրերի համար՝ դիֆերենցված ըստ ավազանային գոտիների և ջրօգտագործողների խմբերի:

Հայաստանում ջրօգտագործողներին նպատակահարմար է բաժանել երկու խմբի: Առաջին խումբը ջրապատողներն են (կոմունալ կարիքներ, ոռոգում, արդյունաբերական ջրօգտագործողներ և այլն): Երկրորդ խումբն իր մեջ ներառում է հիդրոէլեկտրակայանները, ձկնաբուծարանները, ռեկրեացիոն համակարգերը: Ջուրն օգտագործելուց հետո նրանք ջուրը գործնականում նույն վիճակով վերադարձնում են ջրամատակարարին, այլ կերպ ասած՝ ջուրը, փաստորեն, վերցնում են վարձակալության: Ակնհայտ է, որ այս երկու խմբերի համար ջրի հաշվարկային սակագները պետք է լինեն տարբեր: Նշված խմբերը կարելի է պայմանականորեն անվանել ջրապատողների խումբ և ջրավարձակալների խումբ: Միննույն ժամանակ հիդրոէլեկտրակայաններին «վարձակալությամբ» տրվող ջրի հաշվարկային սակագինը չպետք է լինի այնքան ցածր, որպեսզի վերահաշվարկի արդյունքում էլեկտրատեղակայի վճարի տեսակարար կշիռը ջրօգտագործողների առաջին խմբի համար ջրի հաշվարկային սակագնում գերազանցի 5-7%-ը: Հակառակ դեպքում սուբյեկտների փոխհարաբերությունների միջև առաջանում է ֆինանսա-տնտեսական անհավասարակշռություն, որի հետևանքով խաթարվում է ջրամատակարարման համակարգի տնտեսական անվտանգությունը: Հաշվարկային սակագների որոշման ժամանակ պետք է հաշվի առնել օպտիմալ և սահմանային սակագների ապահովման անհրաժեշտ պայմանը [4]: Հաշվարկային սակագների հաստատումից հետո կառավարության կողմից պետք է սահմանվեն ջրի վաճառքի մեծածախ սակագները՝ ելնելով սուբյեկտների վճարունակությունից և սոցիալական շահերից: Հաշվարկային և մեծածախ սակագների տարբերությունից առաջացող դրամամուտքի դեֆիցիտը պետական բյուջեյում պետք է նախատեսվի տրանսֆերտների և դոտացիաների տեսքով:

Ջրային հիմնահարցերի և հիդրոտեխնիկայի ինստիտուտ

**Օ. Վ. Токмаджян, А. Х. Маркосян, А. В. Симонян,
Г. Ф. Мелконян, В. Б. Мкртчян**

**О концепции экономической безопасности системы
водоснабжения Армении**

В свободной системе хозяйствования для разработки степени экономической безопасности системы водоснабжения предлагается использовать две группы показателей: внутрисистемную и внесистемную. Во внутрисистемную группу входят процесс добычи и производства воды, качество воды, экономическая ситуация (потери воды, использование электроэнергии, баланс кредиторных и дебиторных долгов системы). Внесистемная группа включает платежеспособность водопотребителей, возможность банкротства системы, рост загрязненности водных объектов, дефицит воды, состояние правовых и налоговых сфер, инвестиционный климат. Из этих показателей в данной статье рассмотрены принципы ценообразования воды. В случае централизованного института распределения водных ресурсов владелец (в основном государство) часто искусственно снижает стоимость доходов, приравнивая их к минимальной стоимости редкости, которую называем стоимостью псевдоредкости воды. В случае нецентрализованного института появляется понятие относительной редкости воды, которая равна рыночной цене воды. Реальная стоимость редкости воды значительно больше по сравнению с перечисленными. Предлагается после принятия расчетных тарифов устанавливать оптовые тарифы исходя из платежеспособности субъектов и социальных выгод. Из разницы расчетных и оптовых тарифов дефицит выручки должен предусматриваться в государственном бюджете в виде трансфертов и дотаций.

Գրականություն

1. *Агаджанов Г.К., Кашпур А.Д., Василенко С.Л.* Матер. междунар. конгресса “Вода: Экология и технология”. М. Экватек. 2000. С. 641-642.
2. *Թորմաջյան Հ. Վ., Մկրտչյան Վ. Բ., Միմոնյան Ա. Վ., Մելքոնյան Հ. Ֆ.* - ՀՀ ԳԱԱ Զեկույցներ, 2000, Հ. 100, N 4:
3. *Քամինզզ Ռ. Ջ., Ներսիսյանց Վ.* Ջրի գնագոյացումը որպէս միջոց իոնգացիայի ջրօգտագործման արդյունավետության բարձրացման համար (տարբերակների վերլուծություն Մեքսիկայի և ԱՄՆ-ի օրինակներով), Երևան, 1992. 41 էջ:
4. *Մակեյան Պ. Ս., Թորմաջյան Հ. Վ., Ջավադյան Յու. Լ., Մարկոսյան Ա. Խ.* Ագրոգիտություն, 1998, N:11-12, Երևան, էջ 654-657: